

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2018թ. նոյեմբերի 5-9-ը Արմատատի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Մ. Դալլաքյանը և արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի վիճակագիր Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Նյուշատելում (Շվեյցարիա) կայացած «Տվյալների վերլուծություն և տվյալների մոդելավորում» խորագրով դասընթացին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 8-9-ը Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ – Արևելք» (ENI SEIS II East) ծրագրի շրջանակում կազմակերպված Բեռնի կոնվենցիայի N°8 (2012) բանաձևի ներքո հաշվետվողականության և պահպանվող տարածքների ցուցանիշների մշակման վերաբերյալ աշխատաժողովին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 13-14-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ԵՀԳ – ԵԲՄՏՀ II Արևելք / ENI SEIS II East) ծրագրի ղեկավար կոմիտեի 3-րդ նիստին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 26-29-ը Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Լեռների կանաչ ծածկույթի ինդեքս» թեմայով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 27-28-ը Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել է ք. Ստամբուլում (Թուրքիա) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ԵՀԳ-ԵԲՄՏՀ II Արևելք/ENI-SEIS II EAST) շրջանակում Արևելյան Եվրոպայում և Կովկասի տարածաշրջանում ջրի բաղադրիչի «Ցուցանիշի մշակման և ցուցանիշի հիման վրա գնահատման ձևավորման վերաբերյալ գիտելիքների և փորձի փոխանակում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2018թ. նոյեմբերի 28-ին Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած EU4Energy էներգետիկ վիճակագրության ցանցի 5-րդ հանդիպմանը,
- ✓ 2018թ. նոյեմբերի 28-30-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (CES) հովանու ներքո կազմակերպված Աղքատության և անհավասարության չափման փորձագիտական խնդիր հանդիպմանը, ինչպես նաև Աղքատության վիճակագրության ներդաշնակեցման թեմայով աշխատաժողովին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 3-13-ը Արմատատի մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած «CSPRO անդրոիդ-մոբայլ տվյալների հավաքագրում» թեմայով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 4-5-ը Արմատատի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած Արևելյան գործընկերության վիճակագրական փորձագիտական աշխատանքային խմբի 7-րդ հանդիպմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 5-6-ը Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը մասնակցել է ք. Բելգրադում (Սերբիա) կայացած «Վիճակագրական արտադրության ճարտարապետությունը և ծրագրային ապահովման համատեղ օգտագործումը» խորագրով միջտարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 5-6-ը Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների վերաբերյալ վիճակագրության զարգացման հիմնահարցերը» խորագրով աշխատաժողովին,

- ✓ 2018թ. դեկտեմբերի 10-11-ը Արմատատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ա. Պետրոսյանը մասնակցել է ք. Աշխաբադում (Թուրքմենստան) կայացած «Արտաքին առևտրի վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 12-13-ը Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Ջ. Ավետիսյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած 2017թ. միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՀՀ 2008-ի ներդրման նպատակով կազմակերպված ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների փորձագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 19-21-ը ՀՀ ՎՊԽ անդամ- Արմատատի նախագահի տեղակալ Գ. Անանյանը և Արմատատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Արդյունաբերական վիճակագրության կատարելագործում և արդյունաբերական ցուցանիշների բարելավում ԱՊՀ երկրներում քաղաքականության վերլուծությունների համար» խորագրով տարածաշրջանային ծրագրի շրջանակում բարձր մակարդակի խորհրդատվական հանդիպմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 20-ին Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ-պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը:

## Առաքելություններ

- ✓ 2018թ. նոյեմբերի 5-16-ը Արմատատում էին Համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույց վարելու (CAPI) համակարգի տեխնիկական փորձագետ Պավել Ստովպիվսկին և 2018թ. նոյեմբերի 12-21-ը՝ նույն համակարգի ուսուցման փորձագետ Իրինա Սերոփյանը Սպառողական գների ինդեքսի դիտարկումը և տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը Համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույց վարելու (CAPI) տարբերակով իրականացնելու վերաբերյալ խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2018թ. նոյեմբերի 6-8-ը Արմատատում էին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսական կազմակերպության գյուղատնտեսական ինտեգրված հետազոտությունների (AGRIS) ծրագրի փորձագետներ Մայքլ Սթայները, Վասիլ Պետրեն և Ջազա Չելիձեն ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող ԵՀԳԳԶԾ (ENPARD) «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագրի կողմից «Գյուղատնտեսական վիճակագրության տվյալներ օգտագործողների կարիքները» և «AGRIS Մեթոդաբանություն» խորագրով կազմակերպված աշխատաժողովների անցկացման նպատակով,
- ✓ 2018թ. նոյեմբերի 12-16-ը Արմատատում էր Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից վարձված անկախ փորձագետ Սուսաննա Թագը Արժույթի միջազգային հիմնադրամի «Կարողությունների զարգացման բարելավում գների վիճակագրության բնագավառում» նախագծի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների նախագծման և պլանավորման նպատակով,
- ✓ 2018թ. նոյեմբերի 14-15-ը Արմատատում էին ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի փորձագետներ Ջենիֆեր Էրին Պարկը և Թինա Լուիջին ԿՁՆ ազգային հաշվետվողականության հարթակի կատարելագործման և վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակում (SDMX) ստանդարտի ներդրման ուղղությամբ աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2018թ. նոյեմբերի 26-30-ը Արմատատում էին Եվրոստատի կողմից վարձված անկախ փորձագետներ Հալգրիմուր Սնորրասոնը և Մայքլ Հյուջը, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի վիճակագրական գրասենյակի տնօրեն Վոլկեր Տաուբեն և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետ Սթիվեն Վեյը Գործընկերների կողմից փորձագիտական գնահատում իրականացնելու (Peer Review) նպատակով,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 3-7-ը Արմատատում էին Համաշխարհային բանկի փորձագետներ Մորից Մեյերը, Սաիդա Իսմաիլախունովան և Գրեգորի Կիսունկոն «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում Թվինինգ ծրագրի գործողությունների կազմակերպման հարցերը քննարկելու, CAPI-ի իրականացման հետ կապված գործողությունների առաջընթացը ուսումնասիրելու և ECASAT TF-ի շրջանակներում SS ցանցի արդիականացման և աշխատանքների նախագծման և վերահսկման տեխնիկական առաջադրանքի վերջնականացման համար անհրաժեշտ աջակցություն տրամադրելու նպատակով,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 10-14-ը Արմատատում էր Համաշխարհային բանկի փորձագետ Իգոր Չերնիշևը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում քննարկումներ իրականացնելու նպատակով:

## Տեղային սեմինարներ

- ✓ 2018թ. նոյեմբերի 2-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում ակտիվ երիտասարդների համար կազմավորվող «Քաղաքացի գիտնականներ» խմբի մեկնարկային հանդիպմանը և 1-ին սեմինարին,
  
- ✓ 2018թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ - ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ - ԵՄ Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստին,
  
- ✓ 2018թ. նոյեմբերի 8-9-ը ՀՀ ՎՊԽ անդամ - ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Արմատատի ներքին աուդիտի վարչության գլխավոր մասնագետ Գ. Ղազարյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ. Գրիգորյանը, առաջատար մասնագետ Վ. Ճաղարյանը, առաջին կարգի մասնագետ Լ. Թովմասյանը և վիճակագիր Ն. Աբգարյանը, պարենային ապահովության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Անտոնյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հունանյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ա. Խամոյանը և որակի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող ԵՀԳԳԶԾ (ENPARD) «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագրի «Գյուղատնտեսական վիճակագրության տվյալներ օգտագործողների կարիքները» և «AGRIS Մեթոդաբանություն» խորագրով աշխատաժողովներին,
  
- ✓ 2018թ. նոյեմբերի 13-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ազգային մակարդակով սահմանված ներդրումների գործընկերության շրջանակներում բարձրաստիճան մակարդակով կյոր սեղան – քննարկմանը և 2018թ. նոյեմբերի 14-ին՝ Կլիմայի փոփոխության միջգերատեսչական խորհրդի ներքո ստեղծված աշխատանքային խմբի համդիպմանը,

- ✓ 2018թ. նոյեմբերի 13-ին Արմատատի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման (ENPARD/ԵՀԳԳԶԾ) ծրագրի փակման միջոցառմանը,
- ✓ 2018թ. նոյեմբերի 14-ին Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման գծով աշխատանքային խմբի 14-րդ նիստին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 14-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության վիճակագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հսկողության ոլորտում ներդրումները հիմնավորող փաստարկներ. առաքելություն Հայաստան» ծրագրի շրջանակում միջազգային փորձագետների և տարբեր գերատեսչությունների մասնագետների մասնակցությամբ կլոր սեղանքննարկմանը,
- ✓ 2018թ. նոյեմբերի 14-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ - ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ Գ. Անանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստան 2018. էներգետիկայի շաբաթ» խորագրով Հայաստանի էներգետիկայի կարողությունների ներկայացմանը և քննարկմանը,
- ✓ 2018թ. նոյեմբերի 19-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ԵԱՏՄ տարածաշրջանում աշխատաշուկայի վիճակագրություն. մեթոդաբանություն և փորձառություն» խորագրով միջազգային սեմինարին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 19-ին Արմատատի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Թումանյանը և նույն բաժնի վիճակագիր Ն. Աբգարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող ԵՀԳԳԶԾ (ENPARD) «Տեխնիկական օժանդակություն ՀՀ-ի գյուղատնտեսության նախարարությանը» ծրագրի «Ազգային էլեկտրոնային գյուղատնտեսության մշակում» խորագրով աշխատաժողովին,

- ✓ 2018թ. նոյեմբերի 20-ին Արմստատի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնտեսական հեռանկարը» խորագրով սեմինարին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 20-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ – ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ Գ. Անանյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմստատի ներքին աուդիտի վարչության գլխավոր մասնագետ Գ. Ղազարյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Թումանյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, նույն բաժնի վիճակագիր Լ. Գրիգորյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ամրոյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սողոմոնյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը, որակի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ամիրխանյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Մարտիկյանը, պարենային ապահովության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Հակոբյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության պատասխանատվության ներքո գտնվող ԿԶՆ ցուցանիշներ» խորագրով իրազեկության բարձրացման/վերապատրաստման աշխատաժողովին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 23-ին Արմստատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Զեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԱՄԿ Մեծ քսանյակի (G 20) ուսուցման ռազմավարության կիրառման ծրագրի «Հմտությունների զարգացման ռազմավարական պլանավորման և համապատասխան ցուցանիշների ներդրման» մեկնարկային ծրագրի միջգերատեսչական տեխնիկական աշխատանքային խմբի երրորդ նիստին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 26-ին ՀՀ ՎՊԽ անդամ-ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Արմստատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, շինարարության



վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Մարտիկյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գևորգյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ներսիսյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ա. Երեմյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ» տեղեկագրի շնորհանդեսին,

- ✓ 2018թ. նոյեմբերի 27-ին Արմստատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի «YES» ծրագրի փորձագետ Լ. Սարգսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի զբոսաշրջության ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման մասին» ուսումնասիրության ներկայացված տեղեկատվությունն ամփոփելու և գործողությունների ծրագրի մշակման հետ կապված հաջորդ քայլերը համաձայնեցնելու նպատակով ՀԲԽ տուրիզմի փորձագետների հետ տեսաքննարկմանը,
- ✓ 2018թ. նոյեմբերի 29-ին Արմստատի «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտի վիճակագիր Ա. Պողոպոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ազգային ջրային համագործակցություն» ցանցի գործընկերների հանդիպմանը,
- ✓ 2018թ. նոյեմբերի 30-ին ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Երկրատեղեկատվական համակարգերի (GIS) կիրառումը Հայաստանում՝ միտված արդյունավետ կառավարմանը» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 30-ին Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի ձևավորման և գնահատման նպատակով պետական և միջպետական «ծախսեր-թողրկում» աղյուսակների օգտագործման գծով փորձագիտական խմբի 7-րդ նիստին,
- ✓ 2018թ. նոյեմբերի 30-ին Արմստատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՄ-ի «Աջակցություն Հայաստանի պետական կառավարման բարեփոխումներին. հանրային կառավարման ավելի արդյունավետ և պատշաճ ծառայության

մատուցում» ծրագրի շրջանակում կազմակերպված «Քաղաքացիական ծառայություն. նոր համակարգ, նոր մոտեցումներ» սեմինարների շարքի առաջին միջոցառմանը,

- ✓ 2018թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՄ երիտասարդ փորձագետների ծրագրի վերաբերյալ գերատեսչությունների առաջարկությունների քննարկմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 4-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը և տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ամրոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած STEPS ազգային հետազոտության վերաբերյալ հաշվետվության ներկայացման և Հայաստանում ԱՀԿ մանկական ճարպակալման համաճարակաբանական հսկողության ծրագրի (COSI) իրականացման վերաբերյալ աշխատա-ժողովին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 6-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կանաց իրավունքների հզորացում բիզնեսում» խորագրով գործարար կանանց ակումբի 4-րդ հանդիպմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 4-ին և 7-ին տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Քերոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Միջազգային որոնման և փրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) Երկրաշարժի արձագանք 2018թ. գործողության շրջանակում «2018թ. Հայաստանի երկրաշարժի սցենարը միջերկրածովյան աղետի պլանավորման համար (IACP)» խորագրով հանդիպմանը և սիմուլյացիա վարժություններին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 13-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կանաց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» նախագծի մեկնարկին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 14-ը Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. Ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողովի վեցերորդ նիստին,

- ✓ 2018թ. դեկտեմբերի 14-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի շրջակա միջավայրի վիճակագրության ոլորտի վիճակագիր Ա. Պողպոմոզովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի շրջանակներում կայացած «Պատրաստվածության աջակցություն» ծրագրի մեկնարկային աշխատաժողովին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՀՀ-ում խնամակալության և հոգաբարձության մարմինների հանձնաժողովների գործունեության վերաբերյալ իրականացված վերլուծության արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 14-16-ը Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում ձևավորված «Քաղաքացի գիտնականներ» խմբի գործունեության շրջանակներում կազմակերպված արտագնա լաբ ֆորում/կրթական սեմինարին,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 19-ին Արմատատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել է ք. Երևանում կայացած Զբոսաշրջության ոլորտում օտարերկրյա ուղիղ ներդրումների ներգրավումը խթանելու նպատակով գործողությունների ծրագրի մշակման հետ կապված և այլ առաջնահերթություններ քննարկելու նպատակով աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 21-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ-ում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկում» կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2018թ. դեկտեմբերի 21-23-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «Կենսաբազմազանության 6-րդ ազգային զեկույց»-ի պատրաստմանը նվիրված աշխատաժողովին: